BRITISH COUNCIL

ARTS UNIVERSITY PLYMOUTH

CRAFTING FUTURES

Craft Research and Education Development Projects in the South Caucasus 2019-2022

Programme Report by Arts University Plymouth, supported by British Council

Copyright © Arts University Plymouth & British Council

All rights reserved

Written by Dr Kim Bagley and Prof Judith Noble

Editorial design by Joshua Kempson

Ծրագրի զեկույց. Հարավային Կովկասում Արհեստների հետազոտության և կրթության զարգացման ծրագրեր, Փլիմութի արվեստի համալսարան, 2019 – 2022թթ.

Զեկույցն ամփոփում է Բրիտանական խորհրդի «Արարելով ապագան» ծրագրի շրջանակներում Փլիմութի արվեստի համալսարանի կողմից իրականացված հետազոտական և կրթական ծրագիրը, որի ընթացքում 2019-2022 թվականներին ուսումնասիրվել են արհեստների ոլորտը և արհեստագործական կրթությունը Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում: Զեկույցն ընդգրկում է ծրագրի ամփոփ նկարագիրը: Այն բաղկացած է ներածությունից և յուրաքանչյուր երկրում մեր աշխատանքը ներկայացնող առանձին բաժիններից: Զեկույցը հասանելի է անգլերեն լեզվով՝ ինչպես տպագիր, այնպես էլ՝ ներբեռնվող PDF տարբերակներով: Առանձին երկրների զեկույցների թարգմանությունները հասանելի են նաև առցանց: Յուրաքանչյուր երկրի ամբողջական հետազոտության արդյունքները ևս հասանելի են առցանց (տե՛ս ստորև):

Ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Բրիտանական խորհրդին՝ այս ծրագրին տրամադրած խոշոր ֆինանսական աջակցության համար, ինչպես նաև երկրներից յուրաքանչյուրում մեծ նվիրումով գործունեություն ծավալող բոլոր այն անձանց, ովքեր անխոնջ գործակցեցին մեզ հետ՝ չխնայելով իրենց ժամանակը և համօգտագործելով իրենց փորձառությունը: Ցանկանում ենք նաև շնորհակալություն հայտնել Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում մեր բոլոր գործընկերներին՝ ներառյալ նախարարություններին, ազգային կազմակերպություններին, կրթական հաստատություններին, արվեստի և մշակութային կառույցներին և անհատ արհեստագործներին ու վարպետներին, որոնց խորհուրդները, աջակցությունը, հյուրընկալությունը և ոգևորությունը հնարավոր դարձրեցին այս ծրագիրը:

Դոկտոր Քիմ Բեգլի («Կերտելով ապագան» ծրագրի հետազոտող և ղեկավար, 2019-22)
Դոցենտ Ջուդիթ Նոբլ (նախագծի ղեկավար և գիտական մասի ղեկավար)

Փլիմութի արվեստի համալսարան, հունվար 2023թ.

Այս զեկույցի PDF տարբերակը, առանձին երկրների զեկույցների թարգմանությունները և յուրաքանչյուր երկրի ամբողջական հետազոտության արդյունքները հասանելի են Փլիմութի արվեստի համալսարանում և Բրիտանական խորհրդում:

բովանդակություն

Նախաբան	i
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
Հայաստան	7
Հավելվածներ	19

Նախաբան

Մեծ պատիվ է ներկայացնել Բրիտանական խորհրդի «Արարելով ապագան» ծրագիրը, որը մշակվել է Փլիմութի արվեստի համալսարանի հետ համատեղ: Մեկնարկելով 2019 թվականին՝ ծրագիրը նպատակ ուներ նախանշել այն սահմանը, որում արհեստի և արտադրության ընկալումը և արժևորումը կարող էին մեկտեղվել ստեղծարար կրթության համատեքստում:

Որպես փոքր մասնագիտացված համալսարան՝ Փլիմութի արվեստի համալսարանը միավորում է լուծումահեն ուսուցումն ու հետազոտահեն ստեղծարարությունը, ինչպես նաև մարդկանց, մշակույթի և տեղանքի միջոցով սոցիալական արդարության և էկոլոգիական փոփոխության վրա ներազդելու հանձնառությունը: Հետազոտական հարուստ փորձի առկայության հետ մեկտեղ, որը ձևավորվել է «Կերտելով ապագան» միջազգային հետազոտական հարթակի շնորհիվ, այս ծրագրում մեր գործունեության կարևոր բաղադրիչը եղել է արհեստների կերտման ընկալման և արժևորման խթանումն ու խրախուսումը, ինչպես նաև կապը ստեղծարար կրթության հետ բոլոր այն երկրներում, որոնց հետ համագործակցել ենք: Նախ և առաջ, մեր խնդիրն էր աջակցել յուրաքանչյուր երկրում արհեստների ոլորտի կենսունակությանը և կայունությանը՝ արհեստագործների շրջանում արտադրության, բիզնեսի և մարքեթինգային հմտությունների զարգացման միջոցով:

Զեկույցն արտացոլում է Բրիտանական խորհրդի և Վրաստանում, Հայաստանում ու Ադրբեջանում իր գործընկերների անգնահատելի հարաբերությունները և ընդգծում միջազգային սերտ համագործակցության ազդեցությունը՝ նոր կրթական հնարավորություններ ձեռք բերելու և տևական հարաբերություններ ձևավորելու գործում: Սույն ձեռնարկի հաջողությունը պայմանավորված է բոլոր մասնակիցների անմնացորդ նվիրումով, և ես հատկապես երախտապարտ եմ Բրիտանական խորհրդի, Փլիմութի արվեստի համալսարանի գործընկերներին և բոլոր նրանց, ովքեր Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում աշխատում են արվեստի, մշակույթի, կրթության, զբոսաշրջության և հարակից ոլորտների տեղական գործընկեր կազմակերպություններում և ամենօրյա ծանրաբեռնվածությամբ օգնում հասնել մեր նպատակներին: Մեր գործակցությունը հաջողված է:

Պրոֆեսոր Փոլ Ֆիլդսենդ-Դանքս, բակալավր (գերազանցությամբ), մագիստրոս, Բարձրագույն կրթության ակադեմիայի ավագ գիտաշխատող, Արվեստի թագավորական ընկերության անդամ, Փլիմութի արվեստի համալսարանի գործադիր տնօրեն, ՄԹ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվեց, Փլիմութի արվեստի համալսարանը փոքր, մասնագիտացված բարձրագույն ուսումնական հաստատություն է Հարավարևմտյան Անգլիայում: Այն առաջարկում է միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն, որն ընդգրկում է արվեստի, մեդիայի և դիզայնի լայն շրջանակ՝ աչքի ընկնելով արհեստների, վարպետության և դիզայնի բավական հարուստ և ճանաչում վայելող փորձառությամբ: Համալսարանի փիլիսոփայության հիմքում ստեղծարար կրթությունն է, որն առաջարկվում է սոցիալական և կլիմայական արդարության ու կայունության համատեքստում: Համալսարանի նպատակն է կրթել իր ուսանողներին որպես խելացի, մտածող, ստեղծարար արվեստագետներ, արհեստագործ վարպետներ, որոնք ոչ միայն կստեղծեն բարձրակարգ աշխատանքներ, այլ նաև դրական ներդրում կբերեն այն աշխարհին, որտեղ ապրում և արարում են:

Համալսարանի «Կերտելով ապագան» միջազգային հետազոտական հարթակն ուսումնասիրում է արհեստների և վարպետության մշակույթն ու մոտեցումները՝ համախմբելով աշխարհի վարպետներին, հետազոտողներին, մտածողներին և այն համայնքներին, որոնք կիսում են իրենց փորձը և գաղափարները, մշակում դիզայնի և արտադրության նոր ուղիներ՝ շահեկան ազդեցություն ունենալով արագ փոփոխվող աշխարհի վրա:

2019 թվականին համալսարանը ստացավ Բրիտանական խորհրդի «Արարելով ապագան» ծրագրի ֆինանսական աջակցությունը, որի շրջանակներում անհրաժեշտ էր եռամյա ժամկետում գործակցել բազմաբովանդակ մի ծրագրի շուրջ՝ Հարավային Կովկասում Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի արհեստների և կրթության ոլորտների մի շարք գործընկերների հետ միասին: Նպատակը յուրաքանչյուր երկրում արհեստների ոլորտի ուսումնասիրության իրականացումն ու նոր կրթական նախաձեռնությունների մշակում էր: Ծրագրում ներգրավված էին մեծ թվով տարբեր գործընկերներ և կազմակերպություններ վերոգրյալ երկրներից: Այն իրականացվեց փոխըմբռնման և հարգանքի ոգով և փաստեց, որ ներգրավված մասնակիցների համար ծրագիրը կրթական և ստեղծարար կարևոր հնարավորություն էր: Ծրագրի շնորհիվ իրականացվել են նոր նախաձեռնություններ և հաստատվել կայուն ստեղծարար գործընկերություններ: Լիահույս ենք, որ այն կնպաստի Հարավային Կովկասում արհեստների, վարպետների գործունեության ոլորտների և վերջիններիս կրթական հնարավորությունների հետագա զարգացմանը:
Այս զեկույցն ամփոփում է ծրագիրը և ստացված արդյունքները:

Փլիմութի արվեստի համալսարանի կողմից դոկտոր Քիմ Բեգլին նշանակվեց «Կերտելով ապագան» ծրագրի գլխավոր հետազոտող, իսկ դոցենտ Ջուդիթ Նոբլը (Գիտական հետազոտության բաժնի ղեկավար) ստանձնեց ծրագրի ընդհանուր ղեկավարումը: Երբ ծրագիրը սկսեցինք, Կովկասի մասին մերգիտելիքները շատ սահմանափակ էին: Բրիտանական խորհուրդն իրեն դրսևորեց որպես շատ արդյունավետ գործընկեր: Յուրաքանչյուր երկրում հաստատությունների արվեստի ծրագրերի ղեկավարներն ապահովեցին ոչ միայն գործընկեր կազմակերպությունների հասանելիությունը, այլև կիսվեցին իրենց երկրների և մշակույթների, ինչպես նաև արհեստների, արվեստների և կրթության ոլորտների վերաբերյալ բացառիկ գիտելիքներով և փորձով: Կարծում ենք՝ մեր ծրագրի հանդեպ նրանց

Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները Փլիմութի արվեստի համալսարանում:
Ձախից աջ՝ Անա Չխիկվաձե, Վրաստանի Կրթության և գիտության նախարարություն, Մայա Դարչիա, Բրիտանական խորհուրդ, Վարազդատ Խաչումյան, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, Երևան, Նարեկ Թովմասյան, Բրիտանական խորհուրդ, Թամթա Շավգուլիձե, Թբիլիսիի արվեստի ակադեմիա, դոկտոր Սթիվեն Ֆելմինգհեմ, Փլիմութի արվեստի համալսարան, Դիլարա Իբրահիմովա, Բրիտանական խորհուրդ, Տիգրան Թադևոսյան, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, Վանաձոր, Աննա Մնացականյան, Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, Մաթիաս Շորթքուք, Փլիմութի արվեստի համալսարան, Աստեր Աբդուլլաևա, Աստարթ ստեղծարար հաբ/Բաքվի գեղարվեստի ակադեմիա, Դավիթի Պապաշվիլի, Այսի ՄԿՈՒ քոլեջ, Վրաստան, Նաթիա Տրափաիձե, Վրաստանի արվեստի և մշակույթի կենտրոն, Ջեյրան Մամադովա, Ազգային ՄԿՈՒ գործակալություն, Ադրբեջան, Աշխեն Խուդավերդյան, Սմիթսոնյան ինստիտուտ «Իմ Հայաստան» ծրագիր: Լուսանկարը՝ Փլիմութի արվեստի համալսարանի

ոգևորությունը և նվիրումն էական դեր են ունեցել ծրագրի հաջողության գործում: Հարկ է նշել նաև, որ ներգրավված անձանց և կազմակերպություններին լիկատար աջակցություն էր ցուցաբերում Բրիտանական խորհրդի ամբողջ անձնակազմը՝ ներառյալ տվյալ երկրում տեղակայված գրասենյակի տնօրենությունը:

2019 թվականին, երբ ծրագիրը մեկնարկեց, այն նախատեսում էր անհատական փոխանակման և հետազոտական այցեր, ինչպես նաև Կովկասում և Փլիմութում կրթական և մեթոդաբանական սեմինարների շարք:

Կորոնավիրուսի բռնկման պատճառով, մենք ստիպված եղանք ամբողջապես վերափոխել ծրագիրը, որպեսզի դրա բաղադրիչների զգալի մասն իրականացվի առցանց: Նմանօրինակ անցումը բոլորիս համար նոր փորձառություն էր, բայց իրականում այն դարձավ ծրագրի հաջողության կարևոր գրավականը, քանի որ մենք հնարավորություն ունեցանք ավելի շատ առցանց զրույցներ և հանդիպումներ իրականացնել, ինչն անհնար կլիներ առերես անհատական այցերի պարագայում: Այս հարցում Բրիտանական խորհուրդն առանցքային դեր ունեցավ՝ ապահովելով թվային տեխնոլոգիաների և առցանց ռեսուրսների հասանելիությունը ծրագրի բոլոր մասնակիցների համար:

Ծրագրի իրականացումը համընկավ ներգրավված երկրներից յուրաքանչյուրի համար շեշտակի փոփոխության ժամանակահատվածի հետ: Ակնհայտ էին խորհրդային

ժամանակաշրջանի հետևանքները, հատկապես կրթական ոլորտում, բայց ակնհայտ էր նաև այն, որ յուրաքանչյուր երկրում մեր գործընկերները մշակում էին աշխատելու նոր, ստեղծագործ մոտեցումներ, իսկ մեզ համար կարևոր բացահայտում էր նոր գաղափարներ ու մեթոդներ փորձարկելու նրանց մեծ պատրաստակամությունը: Կարևոր է նաև այն, որ Կովկասում ցայս պահը դեռ բարդ քաղաքական իրավիճակ է տիրում: Մենք շնորհակալ ենք յուրաքանչյուր երկրի մեր գործընկերներին, որոնք մեզ օգնեցին հասկանալ տիրող իրավիճակը և լիահույս ենք, որ հնարավոր կլինի մշակել այնպիսի գործելաոճ, որը հաշվի կառնի իրավիճակի բարդությունը և շահագրգիռ բոլոր կողմերի համար զգայուն հարցերի շրջանակը:

Յուրաքանչյուր երկրում մեզ ընդունում էին մեծ ոգևորությամբ և բարյացակամությամբ: Արհեստագործ վարպետները մեր հետազոտողների առջև բացում էին իրենց արվեստանոցների դռները և շռայլորեն կիսվում իրենց աշխատանքներով և գաղափարներով: Ուսուցիչները ներկայացնում էին մանկավարժական նոր մոտեցումներն ու ուսումնառության նորագույն մեթոդները և պատրաստ էին իրենց մասնակցությունը բերել աշխատարաններին և միջոցառումներին:

Յուրաքանչյուր երկրում իրականացրել ենք արհեստների ոլորտի հետազոտություն: Տեղական կրթական և մշակութային գործընկերների աջակցությամբ կարողացել ենք նշանակել և վերապատրաստել հետազոտության հարցերով զբաղվող օգնականներ, որոնք արհեստագործ վարպետների հետ հարցազրույցներ են անցկացրել՝ հատուկ ուշադրություն դարձնելով վերջիններիս աշխատանքների մարքեթինգային գործառույթին:

Վրաստանում և Ադրբեջանում աշխատեցինք Միջին մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման (ՄԿՈՒ) հատվածի հետ՝ ստեղծելու ուսուցիչների վերապատրաստման «Ստեղծագործական ուսուցման» նոր, առցանց մոդուլներ: Հայաստանում ստեղծվեց «Ստեղծարար ձեռներեցության» մոդուլը: Բոլոր այս մոդուլները կազմվել են հետազոտության արդյունքների հիման վրա՝ միտված յուրաքանչյուր երկրի հատուկ կարքիների բավարարմանը և խրախուսելու ուսանողակենտրոն մոտեցումը: Մոդուլները փորձարկվել են ուսուցիչների հետ և ներկայում հասանելի են բոլոր ցանկացողների համար: Հուսով ենք՝ դրանք լայնորեն կգործարկվեն և ավելի կզարգանան՝ ուսուցիչների և ՄԿՈՒ ոլորտների փոփոխվող կարիքներին համահունչ:

Այս ծրագիրն իրական միջմշակութային համագործակցության անգնահատելի օրինակ է: Ծրագրի շրջանակներում սովորեցինք ուսուցման նոր մեթոդներ, ծրագրի մշակման ընթացքում ձևավորեցինք մնայուն, ստեղծագործ, ընկերական և աշխատանքային հարաբերություններ, որոնք հույս ունենք՝ կպահպանվեն և կնպաստեն մեր հաստատությունների և երկրների միջև նոր գործընկերությունների և ծրագրերի աճին:

Ծրագրի մեկնարկը դրվեց 2019 թվականի վերջին՝ Փլիմութի արվեստի համալսարանի անձնակազմի Հարավային Կովկաս կատարած ճանաչողական այցերով: Այս այցերի ժամանակ հատուկ ուշադրություն էր դարձվում յուրաքանչյուր երկրի արհեստագործական և ստեղծարար կրթությունը: Մենք հանդիպեցինք բազմաթիվ մարդկանց և այցելեցինք քոլեջներ, թանգարաններ, արվեստանոցներ և այլ կազմակերպություններ: Այս այցերը ծրագրերի, գաղափարների, ընկերական և աշխատանքային հարաբերությունների սկիզբն էին, որոնք պետք է զարգանային հաջորդ երեք տարիների ընթացքում՝ կապեր ստեղծելով ՄԹ-ի և Հարավային Կովկասի հաստատությունների և ուսանողների, արհեստագործ վարպետների և ուսուցիչների միջև: Հարկ է նշել, որ արհեստագործ վարպետները գիտակցում են արհեստի իրենց ճյուղերի բարդ մշակութային և հանրային արժեքը, ինչպես

ՄԹ և Վրաստանի պատվիրակությունները Այսի ՄԿՈՒ քոլեջում, Կախեթի մարզ, 2019թ.: Ձախից աջ՝ դոկտոր Քիմ Բեգլի, Փլիմութի արվեստի համալսարան, Քենդալ Ռոբինս, Բրիտանական խորհուրդ, Մաթիաս Շորթքուք, Փլիմութի արվեստի համալսարան, Մակա Դվալիշվիլի և Թամար Կիկնաձե, Վրաստանի արվեստի և մշակույթի կենտրոն, Դավիթի Պապաշվիլի, Այսի ՄԿՈՒ քոլեջ: Լուսանկարը՝ Գիորգի Ռամաձեի

նաև ոլորտի ներսում կրթության զարգացման կարևորությունը: Ուստի և զարգացման ու համագործակցության հիմնական ոլորտներն էին հետազոտությունն ու կրթությունը:

2020 թվականի մարտին Հարավային Կովկասի պատվիրակություններն այցելեցին Փլիմութի արվեստի համալսարան: Այս այցը հնարավորություն տվեց պաշտոնյաներին, կրթության ոլորտի մասնագետներին և արհեստագործ վարպետներին ծանոթանալ Արվեստի համալսարանին, հաստատության դասավանդման և ուսուցման մեթոդներին: Պատվիրակները Փլիմութի արվեստի համալսարանի դասավանդողների հետ մասնակցեցին նախնական և բարձրագույն կրթության ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, որոնք ներառում էին ուսանողի անհատականության զարգացման, միջառարկայական կապերի, գաղափարների ձևավորման, խաղի, հետազոտության և պրակտիկայի, մտածողության և ստեղծագործական տարրեր:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են փոխադարձ դասալսումներ. Փլիմութի արվեստի համալսարանի անձնակազմը դասալսումներ է իրականացրել Հարավային Կովկասում: Նույնն իրականացրել են նաև Փլիմութ ժամանած պատվիրակությունները, ովքեր հնարավորություն ունեցան հետևել մեր նախապատրաստական (արհեստագործական մասնագիտական) և բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող ուսումնական գործընթացին, այցելեցին մեր լաբորատորիաներ: Հատկապես հիշարժան էին նախապատրաստական կենտրոնում բեմադրված Խամաճիկների ստվերային թատրոնի ներկայացումը և Դևոնի տեղական ծովամթերքով կերակուրները միասին վայելելը:

Փլիմութի այցերի ժամանակ բոլորիս մոտ այն զգացողությունն էր, որ թևակոխում ենք գլոբալ փոփոխությունների ժամանակաշրջան: Այնուամենայնիվ, մեզնից ոչ ոք այդ

Գեղամ Ղարիբյանի տարբեր չափերի թոնիրները շարված են Առինջ գյուղի իր արվեստանոցի մոտ գտնվող ճանապարհին, Կոտայքի մարզ, Հայաստան: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

պահին իրապես չէր գիտակցում, թե ինչպես կարող էր Կովիդի համավարակը ազդել մեր կյանքի վրա: Հետագայում հենց Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջանում բռնկվեց հակամարտությունը, ինչը նույնպես հնարավոր չէր կանխատեսել: Այս դժվարին հանգամանքները պահանջում էին, որ ծրագրում ներգրավված բոլոր անձիք ջանասիրաբար աշխատեն, որպեսզի ծրագրի ընթացքը չխափանվի: Հատկապես զգալի էր Բրիտանական խորհրդի մեր գործընկերների դերը, ովքեր աշխատում էին անխոնջ՝ բոլորին ոգևորելով և ներգրավված պահելով, օգտագործելով հնարավոր կամ անհրաժեշտ բոլոր միջոցները: Մենք երախտապարտ ենք Բրիտանական խորհրդին, ով շարունակեց աջակցել մեր համատեղ աշխատանքին, այն դեպքում, երբ ավելի հեշտ կլիներ պարզապել չեղարկել ծրագիրը: Բրիտանական խորհրդի Արվեստի ծրագրերի ղեկավարները մեզ հետ սերտ աշխատանք իրականացրեցին՝ վերաձևակերպելու ծրագրի նախնական առաջարկներն ու պլանները: Բոլորս ձևավորեցինք ամուր աշխատանքային հարաբերություններ, որոնք շատերիս օգնեցին հաղթահարել ամենատևական «լոքդաունները»:

Քանի որ համավարակի ցուցանիշները շարունակում էին աճել, արդեն իսկ 2020 թվականի ապրիլին պարզ դարձավ, որ տեսանելի ապագայում նախատեսված միջազգային ճանապարհորդություններն անհնարին կլինեն, և որ անհրաժեշտ կլինի եռամյա միջազգային նախագիծն ամբողջությամբ իրականացնել առցանց: Այդուհանդերձ, հարկ ենք համարում մատնանշել, որ անկախ հանգամանքներից, մենք շատ արգասաբեր գործակցություններ ունեցանք՝ գրեթե ամբողջությամբ աշխատելով հեռավար և հասանք մեր հիմնական նպատակներին:
Հեռավար աշխատանքները մեզ հնարավորություն ընձեռեցին որոշակիորեն բարելավվել ծրագրի տարրերից մի քանիսը. մասնավորապես, մեզ հաջողվեց ներգրավել մեծ թվով մարդկանց, կարողացանք ծրագիրն այնպիսի ճկունությամբ իրականացնել, որ հնարավոր

եղավ օրինակ վերապատրաստման դասընթացները հարմարեցնել ուսուցիչների աշխատանքային ծանրաբեռնվածությանը և առցանց միջոցառումներ անցկացնել առանց նախնական պայմանավորվածության:

Ակնհայտորեն, առցանց ձևաչափով կարողացանք ավելի հեշտությամբ և հաճախակի կապ հաստատել մարդկանց հետ, քան կկարողանայինք առերես հանդիպումների պարագայում: Ինտերնետի հասանելիությունը, թվային գրագիտությունը և ենթակառուցվածքները ծրագրի որոշ մասնակիցների համար խնդիրներ առաջացրեցին՝ սույնով իսկ բացահայտելով այն պարզ ճշմարտությունը, որ անհրաժեշտ է ավելի շատ աշխատանք իրականացնել արհեստագործական ոլորտում մասնագիտական և կրթական գործընթացների համար ինտերնետի հնարավորություններն առավելագույնի հասցնելու ուղղությամբ: Չնայած վերոգրյալ խնդիրներին՝ միշտ գտնվել են դրանք հաղթահարելու ուղիներ. մարդկանց հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ՝ սկսած բջջային հեռախոսներից և տեխնոլոգիաների կիրառումից, մինչև տարածքների վարձակալություն կամ տարբեր ժամային գոտիներում գտնվող և տեխնիկական տարբեր հագեցվածություն ունեցող մարդկանց համար սահիկաշարերի ձայնագրում: Արհեստագործ վարպետների հետ մեր ունեցած հարցումները եկան փաստելու, որ ինտերնետի օգտագործումը շատ ավելի բարձր էր, քան մենք ակնկալում էինք՝ նույնիսկ գյուղական համայնքներում: Այս փաստը ևս մեկ անգամ ընդգծեց թվային հմտությունների թիրախման կարևորությունը Հարավային Կովկասում արհեստների խթանման «Արարելով ապագան» ծրագրի շրջանակներում:

Հարավային Կովկասում արհեստները խորը ավանդույթներ ունեն: Դրանց բնորոշ են տեխնիկական գերազանց հմտությունները և տեխնիկական կրթությունը թե՛ քոլեջներում, թե՛ ոչֆորմալ կրթական միջավայրերում: Նախագծի սկզբում արհեստների և արհեստագործական կրթության ոլորտի մեր գնահատման ժամանակ բացահայտեցինք, որ առաջին հերթին կարիք կա զարգացնելու ոչ թե արհեստներին ներհատուկ տեխնիկական հմտությունները, այլ կրթությունն առավել լայն իմաստով՝ հաշվի առնելով կրթական համակարգի խորհրդային ժառանգությունը և դրա ազդեցությունը սոցիալական և տնտեսական պայմանների վրա:

Հուսով ենք, որ ծրագիրը հնարավորություն ընձեռեց ուսուցիչներին և արհեստագործ վարպետներին ներկայացնել ուսուցման և դասավանդման տարբեր մոտեցումներ և օգտակար հարթակ հանդիսացավ, որպեսզի վերջիններս համօգտագործեն արվեստանոցում և լսարանում կատարած իրենց աշխատանքները: Մենք շատ բան սովորեցինք համագործակցության, միջազգային աշխատանքի և միջմշակութային հաղորդակցության մասին:

Կատած աշխատանքի և հետազոտությունների արդյունքում նաև պարզ դարձավ, որ հնարավորություն կա ուսումնասիրել և ավելի լավ հասկանալ արհեստների ոլորտն ընդհանուր առմամբ և, հատկապես, կենտրոնանալ տարբեր սերունդների ու ոչ ֆորմալ ուսումնառության վրա:

Ծրագրի ժամանակացույցը մեզ կարևոր հնարավորություն ընձեռեց ոչ միայն ուսումնասիրել առավել լայն, համընդհանուր խնդիրները, որոնց առերեսվում է արհեստների ոլորտը, այլև արձանագրել մարդկանց կյանքում և կենսապայմաններում տեղի ունեցած այն կտրուկ փոփոխությունները, որոնք առաջացել են համավարակի հետևանքով, հատկապես 2020 և 2021 թվականներին: Արձանագրեցինք ու հասկացանք նաև թե ինչ ասել է լինել ստեղծագործ վարպետ այս արտասովոր ժամանակներում: Հուսով ենք՝ մեր աշխատանքը կհարստացնի արհեստագործական կրթությունը և կզարգացնի հետազոտական կարողությունները տարածաշրջանում:

Հայաստան

Հայաստանում անհատ արհեստագործների և ստեղծագործողների համար մշակեցինք «Ստեղծարար ձեռներեցության» մոդուլը: Աշխատել ենք Երևանի և Լոռու երեք առաջնակարգ քոլեջների ուսուցչական անձնակազմի և ղեկավարների հետ, որոնք մասնագիտացած են արվեստի, դիզայնի, երաժշտության և նորաձևության ոլորտներում: Սրան հաջորդեցին վերապատրաստման դասընթացները և հետադարձ կապին նվիրված հանդիպումները: Հայաստանյան թիմի տքնաջան և հետևողական աշխատանքի շնորհիվ մոդուլը մշակվել է հատուկ Հայաստանի կրթական համակարգում կիրառելու նպատակով, այնուհետ պաշտոնապես հաստատվել՝ ազգային մակարդակում մասնագիտական քոլեջներում գործարկելու համար: Լիահույս ենք, որ այս կրթական մոդուլը կհամալրի ՄԿՈՒ կողմից առաջարկվող ձեռներեցությանը և արվեստանոցային գործունեությանը վերաբերող առկա մոդուլների շարքերը, և որ այն հնարավորություն կընձեռի ուսանողներին առավել սերտ կապ հաստատել իրենց ստեղծագործական ոլորտների և սեփական աշխատանքները շուկայում ներկայացնելու հնարավորությունների միջև:

Թերլեմեզյանի գեղարվեստի պետական քոլեջի և Փլիմութի արվեստի համալսարանի բակալավրիատի ուսանողների համար իրականացրեցինք «Սքանչելի սափոր» խորագրով փորձարարական թվային մի նախագիծ: Նախագծի շրջանակներում ուսանողները կիրառում էին ֆոտոգրամետրիա և թվային առցանց գործիքներ՝ կիրառելով Փլիմութի արվեստի համալսարանի «FabLab Plymouth»-ի փորձն ու ընձեռած հնարավորությունները: «FabLab Plymouth»-ը Փլիմութի արվեստի համալսարանի թվային արտադրության սեփական հարթակն է, որը թույլ է տալիս և՛ ուսանողներին, և՛ լայն հանրությանը՝ ներառյալ ձեռնարկություններին, օգտվել թվային արտադրության սարքավորումներից և տեխնիկական հնարավորություններից: Թերլեմեզյանի քոլեջի ուսանողները կարողացան սկանավորել և 3D տպագրությամբ ստեղծել թանգարանային նմուշ, այցելեցին տեղի համալսարանը՝ թվային արտադրությանն ավելի մանրամասն ծանոթանալու համար: Քոլեջի ուսանողները բավական հմուտ էին թվային տեխնոլոգիաների կիրառման գործում: Թեև մեզ չհաջողվեց ծրագրի շրջանակում ամփոփիչ միջոցառում կազմակերպել, ծրագիրը կարևոր հնարավորություն ընձեռեց Երևանի և Փլիմութի ուսանողներին և դասախոսներին գործակցել ու թվային տիրույթում տարբեր մոտեցումներ պարփակող աշխատանքներ իրականացնել: Հուսով ենք, որ ապագայում մեր հաստատությունների միջև գործակցային աշխատելաոճի այս մոդելը շարունակելու նոր հնարավորություններ կլինեն:

Վերոգրյալից զատ՝ մենք ձեռնարկեցինք հետազոտական մի նախագիծ, որն ուսումնասիրում էր Հայաստանում արհեստների ոլորտը հենց արհեստագործ վարպետների տեսանկյունից՝ դիտարկելով արհեստագործական պրակտիկաները և ոչ ֆորմալ կրթությունը: Այս նախաձեռնության մեր գործընկերն էր Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը: Այս գործակցության շրջանակներում հատկապես սերտ աշխատանք ենք իրականացրել գիտաշխատող Ռուզաննա Ծատուրյանի հետ:

Համատեղ աշխատանքի ընթացքում ծրագրի համար ընտրվեցին հետազոտողի երկու օգնականներ: Հայաստանում իրականացված դաշտային աշխատանքները մեր օգնականներին հնարավորություն ընձեռեցին զարգացնել հարցազրույցներ անցկացնելու

իրենց հմտությունները և նոր գիտելիքներ ձեռք բերել սեփական մշակույթի մասին: Մենք հույս ունենք, որ մեր զեկույցը օգտակար կլինի հայկական արհեստագործության համար:

Թոնրագործ վարպետ Գայանե Ասլանյանը և իր ամուսինը Գայանեի չթրծված թոնիրների հետ: Թոնիրները դանդաղ չորանում են Գեղարոտի իր տան արվեստանոցում, Արագածոտնի մարզ: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Համատեքստը

Հայաստանում շատ ընկերներ ձեռք բերեցինք և կապեր հաստատեցինք, ինչի շնորհիվ հնարավորություն ունեցանք մեր աշխատանքումներգրավվել բազմաթիվ անձանց և ընդլայնել գոյություն ունեցող մեր ցանցը: Սա մեզ օգնեց գիտակցել Հայաստանի արհեստագործական ոլորտի ավելի լայն համակարգման և ցանցի ստեղծման հնարավոր առավելությունները: Ոլորտի ներկայացուցիչների և բոլոր աջակիցների համար կարևորագույն քայլ կարող է հանդիսանալ ոլորտի համապարփակ վերանայումը՝ վերջին տարիներին իրականացված բոլոր ուսումնասիրությունների, միջամտությունների և նախաձեռնությունների հաշվառմամբ: Նմանօրինակ ձեռնարկը հնարավորություն կընձեռի ոլորտն ավելի լավ հասկանալ և ավելի լավ համակարգել:

Աշխատանքների համակարգման լավագույն օրինակը մեր համագործակցությունն էր Սմիթսոնյան ինստիտուտի «Իմ Հայաստան» ծրագրի հետ: Ծրագրի թե՛ կրթական մոդուլի մշակման, թե՛ հետազոտական ուղղություններում մենք կարողացանք յուրացնել և/կամ ընդլայնել Սմիթսոնյան ինստիտուտի «Իմ Հայաստան» ծրագրի համար ձեռնարկած աշխատանքի շրջանակը: «Իմ Հայաստան» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից, իրականացվել Սմիթսոնյան ինստիտուտի կողմից: Այն մշակութային ժառանգության և զբոսաշրջության համագործակցային ծրագիր է, որը խրախուսում է Հայաստանի ժողովրդին զարգացնել կայուն զբոսաշրջություն՝

հետազոտությունների, վավերագրումի և բանասացության միջոցով: Այն մշակութային ժառանգության և զբոսաշրջության համատեղ ծրագիր է, որը հայերին հնարավորություն է տալիս զարգացնել կայուն զբոսաշրջությունը՝ հիմնված հետազոտությունների, փաստաթղթերի և storytelling–ի վրա: Օրինակ, մեզ հաջողվեց միջին մասնագիտական կրթության ոլորտ ներմուծել ձեռնարկությունների մոդուլի մի հատվածը, որը «My Armenia» ծրագրի շրջանակներում առաջարկվել էր պրոֆեսիոնալ արհեստագործներին:

Երբ առաջին անգամ Հայաստան այցելեցինք, ապշած էինք Երևանի նյութական մշակույթով, քաղաքի յուրօրինակ վարդագույն տուֆակերտ շենքերով: Երևանի «Թումֆենկյան» հյուրանոցի դիզայնն արտացոլում էր հայկական արհեստների բազմազանությունը և լի էր բազմաթիվ գեղեցիկ ձեռագործ նմուշներով, որոնք պատկերացում էին տալիս առ այն, թե ինչ արդյունքների կարող է հասնել արհեստագործության և զբոսաշրջության միահյուսումը Հայաստանում:

Հայաստանի արհեստագործական ոլորտում կան բազմաթիվ կարևոր և հետաքրքիր մասնավոր հաստատություններ, որոնցից շատերը կարողացանք այցելել նախքան համավարակն անհնար դարձրեց ճանապարհորդությունները: Դրանց շարքում են
Տերյան մշակութային կենտրոնը՝ իր պատմական, եկեղեցական հագուստների ստեղծման նորովի մոտեցմամբ, ժամանակակից զարդերի և նորաձևության նմուշներով «Թումո» ստուդիան, և այլն: Ավանդույթի և պատմության վրա հիմնված նոր արհեստները և դիզայներական աշխատանքները տպավորիչ են հատկապես Երևանում: Արհեստագործության ոլորտում աճում է ոչ ֆորմալ և համայնքային ուսուցումը: Այն կենսունակ է, հետաքրքիր և Հայաստանում արհեստների զարգացման համար հուսադրող ապագա է խոստանում: Այդուհանդերձ, որպես զարգացման ուղղություն՝ մենք առանձնացրել ենք մասնավոր և պետական կառույցների միջև փոխհարաբերությունները: Հետևաբար, ծրագրի մեր մոդուլում թիրախում ենք պետական կրթության ոլորտը, իսկ հետազոտական նախագծում՝ ոչ ֆորմալ կրթություն ստացած արհեստագործ վարպետներին:

Հայկական արհեստներ

Ակնհայտ է, որ Հայաստանում քաջ գիտակցում են արհեստների մշակութային արժեքը: Անհերքելի է այն, որ ավելի լայն մակարդակում արհեստագործ վարպետների համար արհեստը միահյուսված է հայկական ինքնության հետ: Հայկական արհեստները վայելում են աշխարհասփյուռ հայերի և՛ հովանավորությունը, և՛ ֆինանսական աջակցությունը: Գոյություն ունի արհեստների համար կենսունակ ներքին շուկա և աճող ներքին հետաքրքրություն արհեստագործական հմտությունների մասնավոր ուսուցման և կրթության նկատմամբ:

Ամուր կապ կա արհեստների և ուտեստների միջև. ծաղկում է խեցեգործության և թոնրի (ավանդական հացի վառարանի) արտադրությունը: Գորգագործությունը և կարպետագործությունը մեծ ժողովրդականություն են վայելում, և գորգերը կիրառվում են ամենուր՝ տներում և շինություններում. հաճախ նաև կարելի է տեսնել բացօթյա տարածքներում լվացվելուց հետո չորանալիս: Փայտի և քարի փորագրությունը չի զիջում իր դիրքերը՝ Հայաստանի տարբեր հանրային վայրերը հարստացնելով նրբաճաշակ խաչքարերով: Դեկորատիվ արվեստում ընդհանուր պատկերագրությունը ներառում է եկեղեցական զարդանախշերը և խորհրդանշական մրգերը, ինչպես օրինակ՝ ամենուր ներկա նուռը: Երկրում աճում է փառատոնների և միջոցառումների թիվը, որը խթանում է առուվաճառքը, արհեստների հետ ծանոթությունը, աջակցում փոքր, բայց աճող արդյունաբերությանը:

Անի Ումրշատյան, գորգագործ և կարպետագործ, Երևանի իր արվեստանոցում ստուգում է դազգահը: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Հետազոտական ծրագրի մշակում

Հայաստանում մեր հետազոտության երկու օգնականներ Մարգարիտ Հարությունյանի և Դիանա Հովհաննիսյանի համար Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ոչ նյութական մշակութային ժառանգության փորձառու հետազոտող և մասնագետ Ռուզաննա Ծատուրյանի հետ աշխատելը մեծ փորձառություն էր: «Իմ Հայաստան» ծրագրի ձեռնարկությունների զարգացման ավագ մասնագետ Աշխեն Խուդավերդյանը մեր նախաձեռնած առցանց դասընթացի ժամանակ նույնպես կիսվեց հայաստանյան արհեստագործ վարպետների հետ աշխատանքի իր փորձով: Տեղական փորձին և գիտելիքին ապավինելն էական նշանակություն ունեցավ համեմատաբար կարճաժամկետ դաշտային աշխատանքներ ներառող ծրագրի համար: Այս իրավիճակում, Մեծ Բրիտանիայի գործընկերների համար (համավարակի պատճառով) հարցազրույցներ անցկացնելու փոխարեն դաշտային աշխատանքներից ստացված տվյալները հեռավար վերլուծելը դրական և օգտակար արդյունք ունեցավ: Հայաստանում հետազոտությունների որակը և Ռուզաննայի նվիրվածությունը զգալիորեն նպաստեցին այս նախագծին: Մարդաբանության ոլորտում հետազոտության օգնականների փորձը ևս հարստացրեց ծրագիրը, իսկ հետազոտության մասնակիցները ցույց տվեցին, թե որքան մեծ հարգանք են տածում սեփական ազգային մշակույթի հանդեպ: Արհեստը, որպես առարկա, միջգիտակարգային աշխատանքի հիանալի տիրույթ է, և Հայաստանում արհեստագործական լայն և ներառական ցանցի հարստացումը այս ծրագրի արժեքի կարևոր բաղադրիչը կլինի:

Մարգարիտը և Դիանան աջակցեցին Ռուզաննային հարցազրույցի մասնակիցներին ընտրելու ուղղությամբ: Նրանք նախ փորձարկեցին իրենց հարցադրումների ռազմավարությունը Երևանում, այնուհետ ուղևորվեցին Հայաստանով մեկ՝ ավելի քան հիսուն արհեստագործ վարպետներից հարցազրույցներ վերցնելու և գործընթացը գրառումների ու լուսանկարների միջոցով արդյունավետ վավերագրելու: Նրանք այցելեցին Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վայոց Ձորի մարզեր նախքան Երևանում արհեստագործ վարպետներից հարցազրույցներ վերցնելը: Հետազոտության օգնականները պատկերացում կազմեցին երկրի արհեստների և արհեստագործ վարպետների առօրյա կյանքի և աշխատանքային պայմանների մասին, զարգացրեցին արժեքավոր հետազոտական և հաղորդակցման հմտություններ, որոնք հնարավոր է ձեռք բերել միայն ոլորտում փորձի միջոցով: Նրանք ստացան ժամանակի կառավարման գործնական գիտելիքներ և, թե ինչպես հարմարեցնել սեփական բառապաշարը և հարցերի ձևակերպումները՝ արդյունավետ հաղորդակցվելու համար: Նրանք սովորեցին մարդկանց վստահեցնել, որ այն ինչ ուզում են ասել, կարևոր է և հետաքրքիր և, որ հետազոտության հարցերին չկան «ճիշտ» պատասխաններ: Նրանք իրենց ժամանակն էին տրամադրում՝ մասնակիցների վստահությունը շահելու համար, անկեղծ հետաքրքրվածությամբ լսելու նրանց աշխատանքների ու հետաքրքրությունների մասին, իմանալու քաղաքական կարծիքները և սրտառուչ անձնական պատմությունները: Հետազոտության օգնականները զրուցել են ավանդական ձեռագործ արհեստներով զբաղվող մարդկանց լայն շրջանակի հետ՝ հեռավոր գյուղերի թոնրագործներից մինչև Երևանի ժանյակագործներ: Սա հագեցած և դժվարին գործընթաց էր, բայց նաև հատուցվող և հաճելի: Մարգարիտը հետազոտական դաշտային աշխատանքը նկարագրեց որպես՝ «... չափազանց հետաքրքիր, գեղեցիկ և հիշարժան օրեր, շատ զվարճալի պահեր, որոնք, վստահ եմ, երբեք չենք մոռանա»: Հետազոտության մեջ առանձնացվեց հայկական արհեստների հարստությունն ու արժեքը, բայց նաև գյուղական արհեստագործ վարպետների խոցելիությունը՝ հատկապես ներկա տնտեսական և քաղաքական պայմաններում:

Դուդուկ պատրաստող վարպետ Միխայիլ Սադոևը Երևանի իր արվեստանոցում ցույց է տալիս իր խառատային հաստոցը: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Լիլիթ Մելումյանի ասեղնագործ կտորները Երևանի Վերնիսաժում (բացօթյա շուկա): Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Կրթական մոդուլի մշակում

Մեզ հատկապես զարմացրեց մեր այցելած արհեստագործական քոլեջների տեխնիկական հմտությունների որակը՝ սկսած կավի մոդելավորումից մինչև զգեստների ստեղծում: Հայաստանում միջին մասնագիտական կրթության ոլորտն ունի ընդհանուր ձեռներեցության մոդուլ, իսկ ՄԿՈՒ քոլեջներում կան կարիերայի խորհրդատուներ: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ քոլեջներում ձեռնարկատիրական գործունեությունը դեռևս բավականին սահմանափակ է խորհրդային ժառանգության առկայության և գործող օրենսդրության պատճառով:

ՄԿՈՒ ոլորտում նկատվող առաջընթացին նպաստելու համար, մենք մշակեցինք «Ստեղծարար ձեռներեցության» մոդուլը, որն ուսանողներին հնարավորություն կտա համատեղել իրենց գործնական և ստեղծագործական հմտությունները ձեռնարկատիրական ուսուցման հետ: Սրանով իսկ ուսուցիչները հնարավորություն ստացան իրականացնել «live brief», ինչպես այն անվանում են Մեծ Բրիտանիայի արվեստի քոլեջներում: Մոդուլը մշակել է Փլիմութի արվեստի համալսարանի Արհեստների և նյութերի տեխնոլոգիայի դասախոս Ռեյչել Դարբուրնը՝ հիմնվելով նշյալ համալսարանում մասնագիտական դասավանդման փորձի վրա: Երեք գործընկեր քոլեջների՝ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի և Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ուսուցիչների հետ ձևավորեց աշխատանքային խումբ, որում իր կարևոր ներդրումն ունեցավ ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի տնօրեն՝ Տաթևիկ Գասպարյանը, ով սկզբից ևեթ մեծ աջակցություն ցուցաբերեց ծրագրին:

Այնուհետև Երևանում անցկացվեցին վերապատրաստման դասընթացներ գործընկերների ավելի լայն խմբի հետ, որոնց աջակցեցին արվեստի անկախ մասնագետ Արմինե Բաչաչյանը և Բրիտանական խորհրդի արվեստի ծրագրերի ղեկավար Նարեկ Թովմասյանը: Փլիմութից հեռավար կապով միացան Ռեյչել Դարբուրնը և Նիք Քրոուլին, իսկ ԱՄՆ ՄԶԳ Սմիթսոնյան ինստիտուտի «Իմ Հայաստան» ծրագրի ներկայացուցիչ Աշխեն Խուդավերյանն անձամբ մասնակցեց սեմինարին՝ներկայացնելով հայաստանյան համատեքստում գործող ծախսերի և հարկման ընթացակարգերը և շարունակելով «Իմ Հայաստան» ծրագրի հետ մեր փոխադարձ կապը՝ ռեսուրսներով կիսվելու, այլ ոչ թե դրանք կրկնօրինակելու ուղղությամբ: Սա կենդանի, ինտերակտիվ սեմինարների շարք էր, որտեղ յուրաքանչյուր քոլեջ բարձրաձայնում էր իր համար առավել կարևոր հարցեր:

Սեմինարներից հետո Ռեյչելը և աշխատանքային խումբը կատարելագործեցին մոդուլը: Այնուհետև, տեղական փորձագետները Հայաստանի կրթական համակարգին համապատասխան ձևաչափով գրավոր ձևակերպումներ ավելացրեցին: Այս հավաքական ջանքերի և արդյունավետ գործընթացների շնորհիվ, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հաստատեց մոդուլի կիրառումը Հայաստանում: Սա նշանակալի ձեռքբերում է, որը ցույց է տալիս Հայաստանում մեր գործընկերների նվիրվածությունը կրթական ոլորտի զարգացմանը:

Խորհրդատվություններ

Պետական մակարդակում արհեստների մշակութային և սոցիալական արժեքի ճանաչումը արհեստագործներին հնարավորություն կընձեռի լսելի դարձնել իրենց պատմությունները և վերահսկել այդ պատմությունների տարածման ուղիները:

Երիտասարդներին անհրաժեշտ է խրախուսել սովորել արհեստագործական հմտություններ և հետևողական լինել: Օգտակար կլինի ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման միջև տարբերության հստակ ըմբռնումը, ինչպես նաև արհեստագործական պրակտիկաների հետ ծանոթությունը և դրանց հասանելիությունը:

Արհեստագործ վարպետներին անհրաժեշտ է աջակցել, որպեսզի նրանք ավելի ինքնավստահ լինեն և կարողանան զարգացնել առցանց հաղորդակցության հմտությունները: Սա նրանց կօգնի պատմել իրենց պատմությունները, ստեղծել համայնքներ և նոր գիտելիքներ ձեռք բերել:

Էլեկտրոնային առևտրի և արտահանման հարցերում արհեստագործ վարպետներին ցուցաբերվող աջակցությունն իր սաղմնային փուլում է, բայց այն ընթացիկ վաճառքների միայն փոքր տոկոսն է կազմում: Սա վաճառքի մի տարբերակ է, որտեղ ստեղծագործողներն ուղղակիորեն վերահսկում են իրենց իրենց սեփական արտադրանքը: Նման վաճառքը, այդուհանդերձ, բավական ժամանակատար է, ուստի երրորդ կողմի կամ ընտանիքի անդամի օժանդակությունը կարող է անգնահատելի լինել: Էլեկտրոնային առևտրի հարցում արհեստագործներն անձամբ են օգնություն խնդրել՝ կայքի ստեղծման, արտադրանքի լուսանկարման և սոցիալական էջերի կառավարման ոլորտներում:

Տեղական նյութերի հայթայթման և պատրաստման շրջանակներում ցույց տրված աջակցությունը (օրինակ՝ բնական ներկանյութեր) կնպաստի ոլորտի զարգացմանը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում իրականացված մեր աշխատանքը գալիս է փաստելու, որ կան բազմաթիվ նախագծեր և նախաձեռնություններ, որոնք տարբեր ձևերով փորձում են զարգացնել արհեստագործական ոլորտը, և որ կարելի է բոլոր այդ նախաձեռնությունների միջև բարելավել կապերը և միմյանց հետ համագործակցության ուղիները՝ ռեսուրսներն առավելագույնս արդյունավետ օգտագործելու և կարողությունների զարգացումն ապահովելու համար: Հայաստանում հանդիպեցինք մի շարք արտասովոր ստեղծագործ–նվիրյալների, որոնց համատեղ աշխատանքի համար հավելյալ ռեսուրսներ գտնելը շատ արդյունավետ զարգացում կդիտվի: Հաշվի առնելով արհեստների կենտրոնական դերը ազգային մշակույթի և ինքնության մեջ՝ ազգային մակարդակով որոշակի ֆինանսական հնարավորություն գտնելը մեծ կարևորություն կունենա, և արհեստագործներին հնարավորություն կընձեռի ներկայացուցչական կազմակերպություն ձևավորել, առաջնորդել և կապեր հաստատել:

Մեր աշխատանքը նաև ցույց տվեց, որ պետական և մասնավոր հատվածներին առավել արդյունավետ համագործակցության հնարավորություն ընձեռնելը հսկայական օգուտ կբերի ինչպես հանրային կրթության ոլորտին, այնպես էլ արհեստների վրա հիմնված աճող ձեռնարկատիրական գործունեությանը. յուրաքանչյուրը մյուսին առաջարկելու շատ բան ունի:

Հասմիկ Մարգարյանը գորգ է գործում. դրվագ: Լուսանկարվել է Իջևանի Թելիկ կոնտրոնում, Տավուշի մարզ: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Սարիբեկ Սարիբեկյանը Գյումրիի իր արվեստանոցում խաչքար է փորագրում: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Լավրենտի Թադևոսյանը Արթիկի իր տանը, իր աշխատանքների և գործիքների հետ, Շիրակի մարզ: Լուսանկարը՝ Դիանա Հովհաննիսյանի

Հավելվածներ

Նախագծի մասնակիցների ցանկ

Մթ
Փլիմութի արվեստի համալսարանի անձնակազմ.
Դոցենտ Ջուդիթ Նոբլ (Գիտական հետազոտության ղեկավար)
Դոկտոր Քիմ Բեգլի («Կերտելով ապագան» ծրագրի հետազոտող, ավագ գիտաշխատող)
Դոկտոր Նատալիա Իրնսթման (Ավագ դասախոս)
Ռեյչել Դարբուրն (Դասախոս)
Նիք Քրոուլի (Էլեկտրոնային ուսուցման փորձագետ)
Թիմ Դիքինսոն (Ուսուցում և դասավանդում)
Պրոֆեսոր Սթիվեն Ֆելմինգհեմ (Պրոռեկտոր, պրոֆեսոր)
Լիզ Էվանս (Նախապատրաստական կրթության դասընթացների դասախոս)
Մեդի Բլիթ (Կրթական ծրագրի ղեկավար, Նախապատրաստական կրթություն)
Մել Բրաուն (Դեկանի օգնական, Դիզայն և հաղորդակցություն)
Սթեֆանի Օուենս (Դեկան)
Իեն Հենկի (Տեխնոլոգիայի գլխավեր մասնագետ)
Բեն Մունդի (Տեխնիկական ռեսուրսների ղեկավար)
Շարլոթ Վորեն (Դասախոս)
Մաթիաս Շորթքուք (Նախապատրաստական կրթության ֆակուլտետի դեկան մինչև 2020թ.)

Ուսանողներ («Մեծ գավաթ» նախագիծ)
Քրիսթինա Օլդֆիլդ
Սարա Քլարկսոն
Թայրոն Վերա

Բրիտանական խորհուրդ
Գալինա Կորետսկայա (Ծրագրի ղեկավար, «Արարելով ապագան» ծրագիր, Կենտրոնական Ասիա և Հարավային Կովկաս)
Կատիա Սթյուարթ (Ծրագրի ղեկավար, «Արարելով ապագան» ծրագիր, 2020 - 2022թթ.)
Քենդալ Ռոբինս (Ծրագրի ղեկավար, Արարելով ապագան ծրագիր, 2019թ.)

Հայաստան
Մասնակից կազմակերպություններ և գործընկերներ.

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ
Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ

Երախտագիտությամբ Սմիթսոնյան/ԱՄՆ ՄԶԳ «Իմ Հայաստան» ծրագրին համագործակցության, գիտելիքների և փորձի փոխանակման համար:

Մասնակիցներ և անհատ համագործակցողներ.

Նարեկ Թովմասյան (Բրիտանական խորհրդի Արվեստի ծրագրերի ղեկավար մինչև 2022թ. օգոստոսը)
Արմինե Բաչաչյան (Թարգմանիչ, ծրագրի աջակից)
Ռուզաննա Ծատուրյան (Հետազոտող, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա)
Դիանա Հովհաննիսյան (Ծրագրի հետազոտության օգնական)
Մարգարիտա Հարությունյան (Ծրագրի հետազոտության օգնական)

Տաթևիկ Գասպարյան (Տնօրեն, ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոն)
Նիկա Բաբայան (Կրթական մոդուլի մշակման աշխատանքային խմբի անդամ)
Վարազդատ Խաչուվյան, Տնօրեն, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ
Հասմիկ Եղիազարյան (Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ)
Գևորգ Պողոսյան (Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ)
Աննա Մնացականյան (Տնօրեն, Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ)
Լիլիթ Արշակյան (Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, կրթական մոդուլի մշակման աշխատանքային խմբի անդամ)
Ելենա Մովսեսյան (Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ)
Ալինա Բոյաջյան (Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ)
Տիգրան Թադևոսյան (Տնօրեն, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ)
Մելինե Հարությունյան (Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, կրթական մոդուլի մշակման աշխատանքային խմբի անդամ)
Լիլիա Այվազյան (Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ)

Մարինե Հակոբյան (Ուսուցման ազգային հիմնադրամ, ծրագրի կրթական մոդուլի կազմող)
Արևիկ Սարգսյան (Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, ծրագրի կրթական մոդուլի կազմող)

Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի «Մեծ գավաթի» մասնակից ուսանողներ.
Անի Քանանյան
Անի Հովհաննիսյան
Մեղրի Բազարջյան
Մերի Մարտիրոսյան
Էլեն Մնացականյան
Պերճուհի Պողոսյան

Ծրագրի բարեկամներ
Հալի Բաթվին (Սմիթսոնյան ինստիտուտ «Իմ Հայաստան» ծրագիր)
Աշխեն Խուդավերդյան (Սմիթսոնյան ինստիտուտ «Իմ Հայաստան» ծրագիր)
Նաիրա Վարդանյան (Սմիթսոնյան ինստիտուտ «Իմ Հայաստան» ծրագիր)
Վարդան Բաղդասարյան (Եվրոպական կրթական հիմնադրամ)

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Հայաստանի արհեստագործ վարպետներին, որոնք մասնակցել են մեր հետազոտական ծրագրի հարցազրույցներին:

058